ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.02.2020թ. ներկայացված (03.02.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/15 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.02.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 2020թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասին հայտարարությունը, որով հաստատել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման Հրավերը, համաձայն որի գնման առարկա են հանդիսանում թվով 7 ապրանքներ:

«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարությունը և հրավերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակված է 2020-01-16, ժամը 17:04:00-ից մինչև 2020-01-24, ժամը 12:00 ներառյալ:

2020թ. հունվարի 24-ին, ժամը 12:00-ին «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովն Ընթացակարգի հայտերի բացման նիստ է հրավիրել, որի թիվ 2-րդ արձանագրությունով փաստել է, որ նիստը իրականացվում է Հրավերի թիվ 5-7-րդ չափաբաժինների մասերով, քանի որ Հրավերի 1-4-րդ չափաբաժինների մասերով նիստը կասեցված է ԳԲՔԱ-ՆԳ-2020/09 բողոքի քննության նպատակով: Պատվիրատուն փաստել է, որ Հրավերին էլեկտրոնային եղանակով հայտեր են ներկայացրել թվով 3 մասնակիցներ, որոնց կողմից ներկայացված հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես Հրավերի պահանջներին համապատասխանող, որ առկա են Հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, որ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, որ Հրավերի թիվ 5-7-րդ չափաբաժինների մասերով հարցումներ և բողոքներ չեն եղել, որ գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Պատվիրատուի կողմից բոլոր 3 մասնակիցների ներկայացրած հայտերը համարվել են Հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող և գնահատվել են բավարար, սակայն 1-ին տեղ զբաղեցնող մասնակից չեն որոշել, քանի որ գնումն իրականացվում էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի Պատվիրատուն ծանուցումներ է ուղարկել բոլոր 3

մասնակիցներին՝ չբողոքարկված չափաբաժինների մասերով գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների հրավիրելով հունվարի 31-ին, ժամը 14:00-ին:

2020թ. հունվարի 31-ին, ժամը 14:00-ին «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3-րդ արձանագրությունով փաստվում է, որ Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով կատարված միաժամանակյա բանակցությունների մի քանի փուլերի վերջնարդյունքում «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից նվազեցրած նոր գինը ավելի բարձր է, քան «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից նվազեցրած նոր գինը: Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3-րդ արձանագրությունն իրենց ստորագրություններով վավերացրել են նաև «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչը և «Խաչպար» ՍՊԸ-ի տն, որից հետո՝ որպես բանակցությունների արդյունքում նվազագույն գին առաջարկած մասնակից, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին է ներկայացվել Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով նոր գինը արտացոլող գնային առաջարկը:

2020թ. հունվարի 31-ին, ժամը 16:00-ին «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը հերթական նիստ է հրավիրել, որի արձանագրության հերթական համարը պետք է լիներ թիվ 4-րդ, և որը՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման Կարգի 40-րդ կետի 5-րդ մասի սահմանումների, պետք է գնահատեր նույն օրը ժամը 14:00-ին կայացած միաժամանակյա բանակցությունների ընթացքում մասնակիցների կողմից նվազեցրած գներով՝ տվյալ պահին ներկայացրած, գնային առաջարկները և որոշեր ու հայտարարեր 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցներին՝ Հրավերի թիվ 5-7-րդ չափաբաժինների մասերով:

Սակայն Պատվիրատուի 2020թ. հունվարի 31-ի ժամը 16:00-ի նիստը համարակալված է որպես «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2-ի ՃՇՏԳՐՏՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ» և որով Պատվիրատուն հետին թվով վերագնահատումներ է կատարել 2020թ. հունվարի 24-ին, ժամը 12:00-ին կազմած իր թիվ 2-րդ արձանագրությունում, որոնք իրավաչափ չեն, քանի որ գնահատող հանձնաժողովների համար նման իրավունքներ սահմանված չեն ոչ Կարգով, ոչ էլ Հրավերով:

2020թ. հունվարի 24-ին, ժամը 12:00-ին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 1-ին և 5-րդ չափաբաժինների մասերով «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» մրցույթին ներկայացված գնային առաջարկը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է որպես Հրավերի պահանջներին համապատասխանող և գնահատվել է բավարար, իսկ Հրավերի չբողոքարկված թիվ 5-րդ չափաբաժնի մասով էլ հրավիրվել է գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների հունվարի 31-ին:

2020թ. հունվարի 31-ին, ժամը 14:00-ին կայացած գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների մի քանի փուլերի ընթացքում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է նվազագույն վերջնական գինը:

Համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման Կարգի 40-րդ կետի 5-րդ մասի սահմանումների՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների ներկայացրած գները համարվում են այն գները, որոնցով պետք է առաջնորդվեն գնահատող հանձնաժողովները իրենց գործընթացներում: Դա նշանակում է, որ ինչպես գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների ընթացքում մասնակիցների կողմից մինչև բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի լրանալը առաջարկված բոլոր նախորդ գները, այնպես էլ մրցույթի Հրավերի հայտի էլեկտրոնային տարբերակով «Նատալի ֆարմ» և «Խաչպար» ՍՊ ընկերությունների կողմից գնային առաջարկով առաջարկած գները՝ Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով, դառնում են առոչինչ, ոչ մի իրավական ուժ այլևս չունեն, և ոչ մի հաշվարկի համար հիմք չեն կարող հանդիսանալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2-ի ՃՇՏԳՐՏՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ» նիստը կայացել է և որոշումները ընդունվել են 2020թ. հունվարի 31-ին, ժամը 16:00-ին, այն ժամանակ, երբ դրանից արդեն 2 ժամ առաջ առոչինչ են դարձել ինչպես «Նատալի ֆարմ» և «Խաչպար» ՍՊԸ-երի կողմից գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների ընթացքում առաջարկած նախորդող գները, այնպես էլ նրանց կողմից մրցույթի Հրավերի հայտի գնային առաջարկով ներկայացրած գները՝ Հրավերի թիվ 5-րդ չափաբաժնի մասով:

Ընկերությունը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի

«ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից 2020թ. հունվարի 31-ին, ժամը 16:00-ին կայացած նիստի «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2-ի ՃՇՏԳՐՏՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ»-ում առկա գնահատումները և որոշումները, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում 31.01.2020թ. ժամը 16:00-ին կայացած «Արձանագրություն N 2-ի ճշգրտված տարբերակ» նիստի որոշումները չեղյալ հայտարարելու մասին:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.02.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.02.2020թ. թիվ 216 գրությամբ հայտնել է հետևյալը.

24.01.2020թ. կայացել է հայտերի բացում «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի 5-7 չափաբաժինների մասով: Հայտ են ներկայացրել 3 մասնակից՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն, «Խաչպար» ՍՊԸ-ն և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

Մասնակիցները հրավիրվել են բանակցությունների, քանի որ գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: 31.01.2020թ. բանակցություններից հետո կազմվել է արձանագրություն N 3-ը:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով գնահատող հանձնաժողովին հայտերի գնահատումն իրականացնելու համար վերջնաժամկետ է սահմանվում դրանց ներկայացման օրից 10 աշխատանքային օր: Արձանագրություն N 3 կազմելուց հետո հետո գնահատող հանձնաժողովը վերանայելով հայտերով ներկայացված գնային առաջարկները, բացահայտել է վրիպում իր կողմից թույլ տրված (Ընկերության հայտն ենթակա էր մերժման): Այդ իսկ պատճառով շտապ արտահերթ նիստ է հրավիրվել, որի

ժամանակ կազմվել է արձանագրություն N 2-ի ճշգրտված տարբերակը: 01.02.2020թ. բոլոր մասնակիցները պատշաճ կերպով ծանուցվել են և բացման նիստերի բոլոր արձանագրությունները հրապարակվել են տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկն ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

Սակայն «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը կազմվել է ոչ ճիշտ և ենթակա էր մերժման (1, 2, 3 սյունակների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին, ԱԱՀ-ն նույնպես սխալ է լրացված):

Իսկ այն, որ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի հիման վրա, ինչպես նշել է Ընկերությունը, հայտով ներկայացված գնային առաջարկը կարող է դառնալ առոչինչ, Պատվիրատուն փաստել է, որ ճիշտ է, նոր գնային առաջարկներ եղել են, սակայն վերջնական գնահատման ամփոփման նիստ դեռևս չէր կայացվել և 31.01.2020թ. ժամը 14:00-ի նիստը բանակցությունների նպատակով էր հրավիրված:

Պատվիրատուն գտնում է, որ անհրաժեշտ է շտկել սխալը, որը բացահայտել է մինչև պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.02.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,

որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ. նիստի թիվ 2 ճշգրտված արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի այն մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.02.2020թ. ներկայացված բողոքը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 06.02.2020թ. թիվ 216 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են

միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգի 1-ին և 5-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.01.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ նիստը իրականացվել է 5-7-րդ չափաբաժինների մասով, քանի որ 1-4-րդ չափաբաժինների մասով նիստը կասեցվել է ԳԲՔԱ-ՆԳ-2020/09 բողոքի քննության պատճառով:

Նույն արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և տեղափոխվել 31.01.2020թ. ժամը 14:00-ին՝ գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով վարած բանակցությունների արդյունքում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը՝

Չափա-բաժինների համարները	Ինքնարժեք թվերով	Շահույթ թվերով	ԱԱՀ** թվերով	Ընդհանուր գինը
1	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
5	11 200 000	4 720 000	3 184 000	19 104 000

ՀՀ դրամ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2020թ. նիստի թիվ 2 ճշգրտված արձանագրության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի այն մերժվել է:

Նույն արձանագրության համաձայն՝ որոշվել է չեղյալ համարել 31.01.2020թ. նիստի N 3 արձանագրությունը:

Այսպիսով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով 5-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Չ ափա-բաժինների համարները	Ինքնարժեք թվերով	Շահույթ թվերով	ԱԱՀ** թվերով	Ընդհանուր գինը Տառերով և թվերով
1	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
5	11 200 000	**7 280 000**	**7 280 000**	25 760 000 **(քսանվեց միլիոն չորս հարյուր հազար դրամ)**

ՀՀ դրամ

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ի սկզբանե հայտով ներկայացված վերոհիշյալ գնային առաջարկը, արձանագրում եմ, որ վերջինիս ԱԱՀ սյունակի գումարը սխալ է լրացված, ինչպես նաև ընդհանուր գնի տառերով գրվածը չի համապատասխանում թվերով գրվածին: Ընդ որում՝ ընդհանուր գինը հաշվարկված է 6=3+4+5 բանաձևին համապատասխան (25 760 000=7 280 000+7 280 000+11 200 000):

Այս տեսանկյունից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում

բացակայում է **գնային առաջարկը**, կամ եթե այն **ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: **Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:**

Ընդ որում՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը հստակ սահմանում է այն դեպքերը, որոնց առկայության պայմաններում մասնակցի գնային առաջարկն ենթակա չէ մերժման, մասնավորապես՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը 5-րդ չափաբաժնի մասով, արձանագրում եմ, որ տվյալ դեպքում առկա չէ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերից որևէ մեկը:

Արձանագրում եմ, որ Ընկերության գնային առաջարկը 5-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պահաջներին:

Ինչ վերաբերում է «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված այն պնդմանը, որ Ընկերությունը գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների շրջանակներում ներկայացրել է նոր ճիշտ գնային առաջարկ, ուստի նախկինում ներկայացված գնային առաջարկը համարվում է առոչինչ, ապա սույն մասով հայտնում եմ, որ Կարգի համաձայն՝ հանձնաժողովը **հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած** մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, իսկ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա վարվում են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ: Հետևաբար գների նվազեցման շուրջ բանակցությունների կարող են մասնակցել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները: Մինչդեռ Ընկերության կողմից ներկայացված հայտը՝ գնային առաջարկի մասով չի կարող գնահատվել հրավերի պահանջների նկատմամբ բավարար, քանի որ գնային առաջարկը ներկայացվել է սխալ: Ուստի և տվյալ դեպքում չի կարող հիմք ընդունվել Ընկերության կողմից գների նվազեցման շուրջ վարած բանակցությունների արդյունքում ներկայացված նոր արդեն իսկ ճշգրտված գնային առաջարկը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 03.02.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**